**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

03 օգոստոսի 2026 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Բացակա էին՝ Ֆայզո Ալիյանը, Մարատ Կնյազյանը, Ալիխան Համեյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Ջասմ Մախմուդովը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արամ Խուդոյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2026 թվականի օգոստոսի 3-ի N 6 արտահերթ նիստի օրակարգը.

1.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 16-ի N 2 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
2.Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը հաստատելու մասին:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -5　　　Դեմ -0　　　Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Ճ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 21)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N 2 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ)*

Լեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջները, ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի 356-Լ որոշումը, որով գումար է հատկացվել Ալագյազ համայնքում բուսաբուծության աջակցության ծրագրի դրական եզրակացություն ստացած շահառուների և մոնիթորինգի հանձնաժողովի անդամներին և Ալագյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Ալագյազ համայնքի ավագանու 2026 թվականի հունվարի 16-ի «Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 2 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններ և լրացումներ՝

1.Ալագյազ համայնքի 2026թ. բյուջեի «Ալագյազ համայնքի բուսաբուծության աջակցության ծրագրի» եկամտային հաշվին ավելացնել 21200280 (քսանմեկ միլիոն երկու հարյուր հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

2.Ալագյազ համայնքի 2026թ. բյուջեի «Ալագյազ համայնքի բուսաբուծության մոնիթորինգի ծրագրի» եկամտային հաշվին ավելացնել 636008 (վեց հարյուր երեսունվեց հազար ութ) ՀՀ դրամ:

3.Ալագյազ համայնքի 2026թ. բյուջեի «Ալագյազ համայնքի սոցիալական» ծրագրի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին ավելացնել 21200280 (քսանմեկ միլիոն երկու հարյուր հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ:

4.Ալագյազ համայնքի 2026թ. բյուջեի «Ալագյազ համայնքի սոցիալական» ծրագրի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին ավելացնել 636008 (վեց հարյուր երեսունվեց հազար ութ) ՀՀ դրամ:

5.Թույլատրել Ալագյազ համայնքի ղեկավարին Ալագյազ համայնքի 2026թ. բյուջեի «Ալագյազ համայնքի սոցիալական» ծրագրի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 21200280 (քսանմեկ միլիոն երկու հարյուր հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ գումարը փոխանցել համապատասխան դրական եզրակացություն ստացած շահառուներին և 636008 (վեց հարյուր երեսունվեց հազար ութ) ՀՀ դրամն ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովին:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ
Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 22)*

---

**ԼՍԵՑԻՆ**

***ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԱՐԱՄ ԽՈՒԴՈՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով՝ Ալագյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1.Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի 2026 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ համաձայն հավելված 1-ի:

***Քվեարկության արդյունքները.***

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ջ. ԽՈՒԴՈՅԱՆ
Ռ. ՄԱԽՄՈՒԴՈՎ
Ս. ՄՈՒՐԱԴՈՎ

Ա. ՇԱԲՈՅԱՆ
Շ. ՉՈԼՈՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 23)*

---

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

ՋԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ

ՌԵԶՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ

ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ

ԱՆԶՈՐ ՇԱԲՈՅԱՆ

ՇԻՐԱԼԻ ՉՈԼՈՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ՋԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ

*Նիստն արձանագրեց՝* Արամ Խուդոյանը